

Յիսուսի պէս աղօթենք մեզ դաւաճանողների համար, աղաչելով որ Աստուած ներէ նոցա զիղջ տալով, վասն զի չեն իմանում ինչ են գործում:

Նորհաւոր Յարութիւն Քրիստոսի. Քրիստոս յարեալ ի մեռելոց, առաջին պտուղն յարութեան ննջեցելոց:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄՏԱԻՈՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ԿԵՆՏՐՕՆԵՐԸ *)

ՓԱՐԻԶ.

ԳԼՈՒԽ Ա.

Ընդհանուր նախադիտելիք. — Չորդական. կենտրոնացուցիչ զօրութիւնը փարիզի, — փարէզը թռչունի թռչքի բարձրութիւնից, — փարիզի լիւտեցիա կոչուած ժամանակից մինչեւ առաջին յեղափոխութեան ժամանակները, եւ առաջին ժամանակներից մինչեւ եօթանասուն թուականը այժմեան դարու, — փարիզը ինչպէս կենսորոն Եւրոպայի մտաւորական քաղաքական կեանքի:

Եթէ յայտնի առածը ճշմարիտ է Հռովմ քաղաքի մասին, իրր թէ ամեն ճանապարհ առաջնորդումէ դէպի Հռովմ. այժմեան Եւրոպայի նկատմամբ, աւելի ճշմարիտ կլինէր Փարիզին վերագրելը նոյն առածի. կարծես մէկ զարմանալի, մոգական, գրաւիչ և բոլորովին առանձին բան պարունակւումէ Փարիզեան կամ Փարէզ բառերի մէջ, Հիմա էլ, երբոր Փարէզը, ինչպէս Ֆրանսիոյ մայրաքաղաք՝ կորցրել է իւր քաղաքական նշանաւոր մասը, իւր շլացնող փայլը, և իւր ահագին տիրապետող դոյր Եւրոպական կեանքի բոլոր մնացած տարրերի վերայ — հէնց այժմ էլ (ինչ ուզեն թող ասեն և գոռան գերմանացիք) Փարէզը այնուամենայնիւ մնումէ ըստ նշանակութեան առաջին քաղաքը Եւրոպայում:

Հատ ծիծաղելի է կարգալ մէկ նոր և ընդարձակ գերմանական համօրէն գիտութեանց ժողովածուի մէջ այն փիլիսոփայական դատողութիւնները, որոնց մէջ ասումէ այդ նշանակութեան առիթով Փարիզի մասին յօդուած կազմող խորամիտ Գերմանացին, «նշանաւոր մասամբ կարելի է Փարիզից խլել աշխարհի մայրաքաղաք կոչուելու անդ-

*) Սղն յօդուածի թարգմանութիւնը յետոյ ստացուեց նաեւ Մայր Աթոռույս ճեմարանի երբեմն աշակերտ Պ. Թադէոս Պալեանից:

րանկութեան նշանակութիւնը, որը այնպէս ակործանօք վերագրուան Դ. Դ. Ֆրանսիացիք Փարէզ քաղաքին, Այդ կոչումը չէ կարելի վերագրել Փարիզին, ոչ ըստ քանակութեան բնակչաց, ոչ համաշխարհական վաճառականութեան վերաբերութեամբ, որովհետեւ այդ մտքով Փարիզից աւելի բարձր կանգնած է Լոնդօնը, ոչ պատմական նշանակութեամբ Եւրոպայի համար, որովհետեւ Հռոմը այդ մտքով աւելի բարձր է Փարիզից, ոչ գեղեցկութեամբ զրից, որովհետեւ Նեապոլիսը, Լիսսաբօնը, և մինչև անգամ Ստօքհօլմը—անհամեմատ գեղեցիկ են Փարիզից. ոչ տարբեր ցեղերի կուտակութեամբ, որի մասին Փարէզը չի կարող համեմատուել ոչ Աոստանդնուպօլսի հետ,—ոչ Վիեննայի, և ոչ Նիւ Եօրքի հետ անգամ. ոչ արուեստների նշանակութեամբ,—որովհետեւ պէտք է խոստովանուել, թէ այժմեան Բերլինը և Գերմանիայի շատ կենտրոնները աւելի գերազանցում են Փարիզից իւրեանց արուեստական հաստատութիւններով. « Փարիզի նշանակութիւնը ուրանալուց յետոյ, ինչպէս » համաշխարհական մայրաքաղաքի, յարգելի Գերմանացի հետաքննողը գալիս է այն եզրակացութեան, թէ Փարիզի ծայրագոյն իշխողութիւն բացառապէս հիմնվում է այն բանի վերայ, որ Փարէզը երկար միջոց մայրաքաղաք էր ազգի, որ կանգնած էր Եւրոպայի մէջ ամեն քաղաքական և բնկերական շարժմանց գլուխ, և նոյնպէս այն պատճառով՝ որ Փարէզը վաղ ժամանակից շատ գերազանց յարմարութիւն ունի օտարականներին ընդունելու և զետեղելու համար, որոնք այստեղ իրր թէ գտնուէին ամենատեսակ հարկաւոր յարմարութիւնները ապրելու և ուրախ ժամանակ անցնելու համար, Բայց այս անիրաւ դատման արձակող յարգելի Գերմանացին սկսում է բանալ փոքր առ փոքր իւր Գերմանացի ընթերցողների առաջ Փարիզի պատկերը նորա ամեն հանգամանքներով, և մասներով, և որքան աւելի բաց է անում նորա տեսքը, նորանով աւելի ստիպում է մոռանալ իւր դատմանը, վասն զի նորա անաչառ ստորագրութեան մէջ անգամ Փարէզը երևում է իսկապէս « աշխարհի մայրաքաղաք, բոլոր միւս Եւրոպայի մայրաքաղաքների առաջ այնպիսի ահագին առաւելութիւններով, որոնք բնականապէս պէտք է տան նորան անդրանկութեան նշանակութիւնը »

Բայց որքան մենք կարգացել ենք զանազան ստորագրութիւնների մէջ Փարիզի արժանաւորութիւնները և պակասութիւնները, որքան աչքի ենք անցրել զանազան ընդարձակ և համառօտ ստորագրութիւններ այդ զարմանալի քաղաքի — մենք նոցա մէջ ոչ մի տեղում չենք գտել այն՝ ինչ որ պէտք էր վերագրել Փարիզի ամենամեծ արժանաւորութիւններին, և թէ այն գլխաւորապէս ծառայում է Փարիզի ձգողական զօրութիւններին ինչպէս բացատրութիւն, Բանը նորանում է, ով և լինէիք դուք ընթերցող. և ինչով պարապէիք, ինչ նպատակով երթայիք արտասահման և ինչ տրամադրութեան մէջ մտնէիք Փարէզ — դուք միշտ

և ամեն բանի մէջ կը գտնէիք այնտեղ կատարեալ բաւականութիւն ձեր ցանկութեանցը նոյն չափով՝ որքան դուք այդ բաւականութիւնը խնդրելու լինէիք։ Եթէ քսան հնգիկ նաբարներ (իշխան) չափ հարուստ էք և կամենում էք անշուշտ աշխարհի առաջ փայլիլ ձեր անթիւ գանձերով, ցանկանում էք՝ որ ամենը ձեր հարստութեանց և ձեր անմիտ շռայլութեանց վերայ խօսեն — գնացէք Փարէզ, և այս համաշխարհական շուկայի մէջ դուք կարող կը լինէք ոչ միայն կատարելապէս բաւականութիւն տալ ձեր անձնաւորութեանը, այլ մի և նոյն ժամանակ կարող կը լինէք ծախսել կարճ միջոցում ձեր միլիոնները ամենաախորժ կերպով։ Եթէ դուք սիրող էք կազմելու ամենատեսակ արհեստների և ճարտարութեանց ժողովածուներ — գնացէք Փարէզ, և դուք քանի մի տարում կը կազմէք այնտեղ որ շրջանի կամ ժողովրդի կամենաք արտադրութեանց և առարկաների ժողովածու։ Եթէ զուարճանալու կիրքը ձեզ յուզում խռովում է և դուք ցանկանում էք անդադար նուիրել նոցա քանի մի ամիսներ կամ քանի մի տարիներ — գնացէք Փարէզ, ճախրեցէք խնձոյքից խնձոյք, կօնցերաից կօնցերա, տօնից տօն, թատրօնից թատրօն։ Պարո՛ղ եմ ձեզ հաւատացնել, որ դուք կարող էք ցնդուել այդ նոր Բարիլոնի մէջ, ի հարկէ շատերի հետ դուք էլ կեդրակացնէք, որ Փարէզը միայն զուարճանալ գիտէ։ Եթէ դուք պատկանում էք այն բախտաւոր մահկանացուների շարքին, որոնց գլխաւոր հոգսը կեանքի մէջ է լաւ ճաշը, նուրբ դինին և ուրիշ նիւթական զուարճութիւնները — շնորհ արեք գնալ Փարէզ, բոլորը այնտեղ կը գտնէք, ոյն էլ այնպէս զանազանակերպ, այնպիսի առատութեամբ որ ո՛չ մի տեղ աշխարհում չէք տեսնիլ։ Բայց այդ քիչ է, — եթէ դուք չունիք որոշ հակամիտութիւն գէպի շրացուցիչ սնտոի շռայլութիւնը, աւելի համբաւաւոր սիրող չէք հնութեանց և հազուագիւտ իրաց, հետամուտ չէք աղմկալի բաւականութեանց և զուարճութեանց, որովայնամոլութեան և ուրիշ նիւթական վայելչութեանց։ և եթէ դուք հասարակ և պարկեշտ մահկանացու էք, շատ չափաւոր՝ ձեր ցանկութեանց մէջ, աւելի չափաւոր միջոցներով, և դուք ցանկանում էք նուիրել ձեր անձը ուսումնասիրելու որ և իցէ գիտութիւն, սկսելով բժշկականութիւնից և վերջացնելով եգիպտաբանութեամբ — գնացէք Փարէզ։ Դուք այն տեղ կը գտնէք հնար շատ պարկեշտութեամբ և հանգարտ ապրելու, յարմարաւոր բնակարանում։ Կըստանաք շատ աժանագին ձեր կեանքի ամէն պիտոյքը, իսկ ձեր ուղած արուեստը սովորելու կը գտնէք այնպիսի մանանագէտներ, այնպիսի թանգարաններ, այնպիսի մատենադարաններ և ժողովածուներ, այնպիսի ուրախ պատրաստականութիւն ծառայելու և օգնելու ձեզ ձեր սովորելում, որ աշխարհումը ոչ մի տեղ չէք պատահիլ։ Պէ՛տք է արգելք աւելացնել, եթէ դուք պատուելի ընթերցող, կը ցանկաք իսկապէս նուիրել ձեր անձը սովորելու որևիցէ արուեստական գործողութիւն, որևիցէ արհեստ կամ ճարտարութիւն (ուստայութիւն),

որեւիցէ ճիւղը վաճառականութեան — ձեզ նոյնպէս պէտք է անպատճառ երթալ Փարէզ, և դուք կը համոզուէք, որ ոչ մի տեղ աշխարհի մէջ ոչ ոք այնպէս իր գործերին ճշգումեամբ և զրաւանապէս չի վերաբերւում, ոչ ոք այնպէս չի աշխատում հաստատապէս, հասկացողութեամբ, անխոնջ, ինչպէս փարիզեցիք: Եւ ահա՛ Փարիզի հենց այդ անսովոր բազմակերպութեան մէջ, որ մինչև ցայժմ Եւրոպոյ մտաւորական, քաղաքական, հասարակական, արհեստական և վաճառականական կեանքի ամենալսեմ կենտրոնն է — հենց այդ բազմակողմանի Փարիզեան կեանքի մէջ է Փարիզի ձգողական զրուծիւնը: Եւ այս պատճառաւ Փարիզի հիմնաւոր ճանաչողներէն ոչ ոք չի զարմանում, երբ տեսնումէ, որ միակերպ հրապարանքով զիմումէ դէպի Փարիզ հարուստն էլ, աղքատն էլ, ծերունին էլ, երիտասարդն էլ, բարձր զիրք ունեցող տիկինն էլ, գիտութեան, ճարտարութեան և արուեստի ասպարիզի մէջ պարկեշտ աշխատաւորն էլ, Բայց ապրելով Փարիզի մէջ՝ մենք համոզւում ենք որ Փարիզի մէջ միտպէս լաւ է զգում՝ եւ ինքնահաւան անգղիացին՝ որ կատարելապէս վերածնվումէ այնտեղ, եւ տխրամած գերմանացին՝ որ Փարէզ է փախչում բազմակարօտ հայրենիքից և այստեղ գտնումէ ընդարձակ ասպարէզ գործադրելու իւր գլխաւոր յատկորոշ արժանաւորութիւնները, այն է չափաւորութիւնը և ճշգրութիւնը: Եւ տեսնելով այդ ամենը մենք ակամայ բարձրաձայն ասում ենք, «այժմ Փարէզը արգարև զարմանալի քաղաք է, արդարև աշխարհի մայրաքաղաքն է»:

Փարէզ ճանապարհորդողը երբ անցնումէ Վիեննա և Բերլին մայրաքաղաքներով, այդ երկու քաղաքները երևում են նորան ինքն ըստ ինքեան շատ երևելի, շատ գրաւիչ, ընդարձակ, փայլուն, բարեկարգ և բազմամարդ: Բայց նոյն ճանապարհորդը ապրելով մի փոքր ժամանակ Փարիզի մէջ՝ երբ վերադառնումէ հայրենիք նոյն Վիեննայով կամ Բերլինով — նա բնաւ չի կարողանում զարմացքից ուշի գալ, Ի՞նչ է պատահել նորա աչքերին: Ի՞նչն է այդպէս յանկարծ սաստիկ փոխել նորա բարոյական մաշտարը, Ի՞նչն է նորա հայեցութեամբ այն աստիճան ընդարձակել, որ էլ աւելի գրաւիչ, ընդարձակ, փայլուն, բարեկարգ քաղաքներ չեն լիցում նորան ոչ Վիեննան և ոչ Բերլինը: Հապա՜ ո՞ւր է այն բազմամարդութիւնը, որ այնտեղ, Վիեննայի և Բերլինի փողոցներում նորան ապշեցնումէր: Իսկ առանձնյատկութիւն (оригинальность) չբիւայ, և հետքն անգամ չի երևում ոչ Բերլինում և ոչ Վիեննայում: Վասն զի մեր ճանապարհորդը ուր և իւր հայեցութեամբ զարմնումէ, ամէն կողմից միայն փրանսիացեաց և փրանսիական գաղափարներից վեր առած խղճալի նմանողութիւն, խղճալի պատճէններ է տեսնում՝ բոլոր բաներում, սկսած շինութիւններից և զբօսարաններից մինչև նորաձեւութիւնները, սովորութիւնները և յարմարութիւնները, եւ Եւրոպայի բոլոր տարածութեան վերայ Փարիզից յետոյ հեշտութեամբ չես

պատահել առանձնայատկութեան, միայն թէ Ռուսաստանի սրտումը — «Մոսկովայում»։ Որոնց պատահել է Ռուսաստանից տեղափոխուել ուղղակի դէպի Լօնդօն և այնտեղ միքանի ժամանակ բնակուել անվերջ գոռգոռոցի և շարժման, այս համաշխարհական վաճառականութեան և գործարանական գործունէութեան կենդրոնի, մառախուղի, միգի և մուխի մէջ, հսկայական հարստութեան զարհուրելի աղքատութեամբ հանդերձ խառնուրդի մէջ, նոքա հեռանալով մթազին Լօնդօնից դէպի լուսաւոր, մաքուր, ուրախ, կենդանի և գրաւիչ Փարէզը, բոլորովին հակառակն են զգացել, և այս միայն՝ ուրախալի տպաւորութիւն, Լօնդօնը թուել է նոցա ինչպէս բանտ, ինչպէս ուղղիչ հաստատութիւն, որի մէջ մարդկանց բանտարկումն մի սահմանեալ ժամանակամիջոց, մի որ և է յայտնի գործի մասին — իսկ Փարիզում նոքա ծաղկել են, ազատ շունչ են քաշել, և իրանց ճակատի խորշումը հեռացրել ու ահամայ, ասել են. «մեծ է, ահագին է, հարուստ է Լօնդօնը, բայց Աստուած նորա հետ, Փարէզը սակաւ բաղմամարդ է, բայց մարդիկ այստեղ աւելի լաւ են, և կեանքը աւելի թեթեւ»։ Եւ չըզարմանալ այս յայտնի արձագանքի վերայ, այս սրտագին տպաւորութեանց վերայ չըկայ հնար այն մարդուն, որ գէթ թուշունի թուիչքի բարձրութիւնից կրճանթանայ բոլոր դիտութեանց և արուեստների գանձի հետ, բոլոր յարմարութեանց հետ, որոնք զանազան մտքով և յարաբերութեամբ ներկայացնումէ Փարէզը ոչ միայն բնիկ իւր բնակչին՝ փարիզեցուն, այլ և, որ և իցէ օտարականի, որ ցանկանումէ ճշդութեամբ հետեւել Փարիզի իսկական կեանքին, Ամենից առաջ նկատենք, որ Փարէզը՝ նաև նոյն իսկ դերմանացի խիստ դատաւորների ասութեամբ, համարվումէ Եւրոպայում ամենաառողջ քաղաքը։ Գերմանացիք խոստովանումեն, որ բոլոր ամենազլխաւոր քաղաքական կեանքի կողմերը — ջրաբաշխութիւնը, ջրանցքները, լուսաւորութիւնը, փողոցների մաքրութիւնը, ճանապարհների և հաղորդակցութեանց յարմարութիւնները, հեռագրութիւնը, տելեֆօնը*) և փոստային ծառայութիւնը, ոստիկանութիւնը, և պաշարեղէնների մատակարարելու մասը — կազմուած են Փարիզի մէջ անպարսաւելի, և արժանի՝ են ոչ միայն ուսումնասիրելու, այլև հետեւելու։ Պէտք է մոռանալ՝ որ խօսքը այն քաղաքի մասին է, որի մէջ բնակիչները չափազանց խիտ են և մէկ քառակուսի միլոնի վրայ ապրումեն 23,400 մարդ։ Այսպիսի կենտրոնի հետ որպիսի է Փարէզը, աւելի մօտ ծանօթանալու համար, պէտք է մտիկ տալ այն թուանշանների վերայ, որոնց մէջ յայտնի է լինում նորա կեանքի և գործունէութեան, նորա հարստութիւնների և յարմարութիւնների համարը։

*) Տելեֆօն (բառ յունական) է սլոնայիսի կաղմուածք երկաթեայ խողովակների, որոնց միջնորդութեամբ հեռաւոր խօսակցութիւնը եւ ձայնը ճիշտ լսվումէ։

Փարէզը ներկայանումէ ահագին կենտրոն համարեա թէ երկու միլիոն բնակիչներով, կառավարութեան նկատմամբ քսան շրջանի կամ մերիի բաժանուած:

Այս ահագին քաղաքի բիւզժէտը շատ փոքրիկ թագաւորութիւնների բիւզժէտից նկատելի քանակութեամբ աւելի է, և 1877 թ. հասաւ ահագին թուանշանի 272,000,000 ֆրանկի: Փարիզի քաղաքական աղ-գարնակութիւնը ունի 340,896 ընտրողներ, և ի հարկէ ամէն ընտրո-ղութեանց ժամանակ բնաւորութեանց վերայ նշանաւոր ազդեցութիւն է անում: Փարէզ քաղաքը պակաս դեր չէ խաղում և զինուորագրու-թեան մէջ, որովհետեւ իւրաքանչիւր տարի տալիս է նա մերձաւորա-պէս 14,000 հոգի: Փարէզը իւր երկու միլիոն բնակիչներով ստիպուած է իւրաքանչիւր տարի նուիրել իւր եկամուտների համարեա թէ տասնե-րորդ մասը ժողովրդի ամենաաղքատ դասի պահպանութեան համար: որոնք բաղկանումեն 20,000 արու 35,000 էգ և 56,000 երեխաներից, որոնք բաժանուած են զանազան բարեգործական հաստատութեանց վերայ: Այդ ահագին թուանշաններից, որ կողմին որ մենք դարձնենք մեր ուշադրութիւնը, որ կողմով զբաղուենք Փարիզի կեանքի հետ — մենք ամէն տեղ կը հանդիպենք նոյնպիսի թուանշանների: Փարէզը ինչ-պէս գործունէութեան գիտութեանց կենդրոն զարմացնումէ շատ հաս-տատութիւններով, որոնք նախանշանակուած են նորա համար, որպէս զի օժանդակեն գիտութեան զարգացմանը և տարածեն բարձրագոյն լու-սաւորութիւն ամենայն գիտութեանց ճիւղերի մէջ, Բացի փարէզի Սօր-բօնի հին համալսարանից, որ գեռ պահպանել է մասամբ նոյն բնաւո-րութիւնը, որը ունեցել են միջին դարերի համալսարանները, բացի ան-ուամբս «*Կօլլէժ դը Ֆրանս*» (Collège de France) ամենքի համար բաց և զիւրամերձ բարձրագոյն հաստատութիւնից որի մէջ կարդումեն հրա-պարական դասախօսութիւններ գրականութիւնից, պատմութիւնից և բնական արուեստներից, Փարիզումը կան գեռ էլի առանձին առանձին բարձրագոյն ուսումնարաններ, համալսարանական դասախօսութեան յատուկ բաժնով, այսինքն է դպրոց իրաւանց — իրաւաբանական բաժ-նով, դպրոց բժշկականութեան — բժշկական բաժնով, Իւրաքանչիւրը այս հաստատութիւններից ունի իւր ահագին միջոցները, իւր հարուստ գրադարանները և իւր ընդարձակ տնտեսութիւնը: Բացի այս դպրոցնե-րից, որոնք տալիս են համալսարանական կրթութիւն, կան էլի շատ տասնաւոր բարձրագոյն ուսումնարաններ, որոնք պատրաստումեն բարձր աստիճանի գործնական գործունէութեան համար, որպիսիք են, «*Բարձրագոյն տարրական դպրոցն*», «*Գործնական դպրոց բարձրագոյն լուսաւորութեան*», «*Քաղաքականութեան դպրոց*», «*Դպրոց քարտի-սաց*», «*Դպրոց արեւելեան կենդանի լեզուաց*», «*Դպրոց ճանապարհաց հաղորդութեան*», «*Դպրոց լեռնական տեսչութեան*», «*մէկ քանի դպրոցներ գեղարուեստից զանազան ճիւղերը ուսումնասիրելու*»: Միջին

կարգի լուսաւորութեան համար Փարիզումը ամենի համար բաց են և դիւրամերձ վեց ահագին լսարաններ և երեք Կոլլեժներ, (որոնց ումանց մէջ համարուած են մինչև 3000 ուսանողներ), 273 նախակրթարաններ, որոնք պահվում են քաղաքի հաշուով և 1056 մասնաւոր դպրոցներ, և առհասարակ բոլոր պատանիների թիւը, որոնք ուսանում են այս դպրոցներում, հաւասարում է 158,000 հոգւոյ, Իսկ Փրանսիայի ամեն գիտութեանց և ուսումնարանական հաստատութեանց գլխաւորն է « Փրանսիայի ինստիտուտ » կոչուածը, որ բաղկանում է հինգ ձեմարաններից, այն է 1. Փրանսիական ձեմարան, 2. Արձանագրութեանց և գեղարուեստական գրականութեանց ձեմարան, 3. ձեմարան գիտութեանց, 4. ձեմարան աղատակտն արուեստից կամ ճարտարութեանց և 5. ձեմարան բարոյական և քաղաքական գիտութեանց, Այս հինգ ձեմարանների անդամ հրաւիրվում են ամենից հռչակուած մարդիկ, ամենից աւելի հեղինակութիւն ունեցող ներկայացուցիչները զանազան գիտութիւններից, արուեստից և այժմեան գրականութեանց ամենանշանաւոր տաղանդաւորներից, Անդամութեան հրաւերը Փրանսիական Ինստիտուտի ձեմարաններից մէկի համար, ոչ միայն Փրանսիայի սահմանում, այլև բոլոր աշխարհի մէջ համարվում է ամենամեծ պատիւը, որը կարճ է ձեռք բերել ուսումնականը կամ արուեստագէտը, Արուեստների և գիտութեանց գործնականապէս ուսումնասիրելու և կատարելապէս սովորելու համար, Փարէզը մատակարարում է իւրաքանչիւր արուեստի և ճարտարութեանց պարագողի տնօրէնութեանը անսպառ հարստութեան դանձերի նպաստ, որ դարերով ժողոված է Փարէզ քաղաքում:

(Շարունակել)

(Թարգմ.) Զ. Տ. Զաքարեանց:

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ԱԲԵԼԻ

ԵՐԵՔ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ.

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ Ս. ԳՆՈՒՆԻՈՅ.

ՅԱՌԱՋԱԲԱՆ.

Եթէ թատրոնն ընդունվում է իբրև նախակրթարան հասարակաց՝ անշուշտ նորանում ներկայացնելու նիւթն և առարկան պէտք է ունենայ գէպի բարոյականութիւն յորդորող միակ նպատակ, որի մէջ իբրև պարզ հայելի՝ իւրաքանչիւր որ տեսնի իւր անցեալն, ներկայն և ապագայն. մոլին իւր մոլութիւնն տեսնի ու դարչի զղուանքով և առաքինին՝ իւր ուղղութեան մէջ խրախուսուի: